

Հ. Մարտիրոսյան

Նախնական հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ Սյունիքի ժայռապատկերները վանկա-գաղափարագիր գրային համակարգ է, որը ստեղծվել է ոչ ուշ քան Ք.ա. XI հազարամյակը:<sup>1</sup> Մեր կատարած քննության ընթացքում նաև պարզել ենք, որ Սյունիքի ժայռապատկերներում առկա են շումերական և եգիպտական հարյուրավոր նշանագրեր:

Հետևաբար կարելի է ենթադրել, որ հին քաղաքակրթությունները (Շումեր, Էլամ, Եգիպտոս) հիմնողներն իրենց գրային համակարգերը ստեղծելու պահին պիտի տեղյակ լինեին Հայաստանում վաղուց գոյություն ունեցող պատկերագրությանն ու նրա գործածության սկզբունքներին: Նաև բնական է, որ նրանք պիտի օգտվեին այդ գիտելիքներից և անշուշտ պիտի հիշեին ու հիշատակեին այդ գրերի գտնվելու վայրը: Հին միջագետքյան և եգիպտական ավանդույթների համաձայն գիրը աստվածային շնորհ է և շումերներն ու եգիպտացիները այն ստացել են համապատասխանաբար Հայա և Թոթ աստվածներից: Սակայն առ այսօր հրապարակված շումերական ու եգիպտական գրավոր սկզբնաղբյուրները գրի ծագման առաջնային վայրի մասին ուղղակի աշխարհագրական ցուցումներ չեն հաղորդում:

Շումերա-եգիպտական մշակութային ազդեցության ոլորտին պատկանող, սակայն ավելի ուշ ժամանակաշրջանից եկող աղբյուրներում բարեբախտաբար այդպիսի ցուցումներ պահպանվել են: Կարևոր է, որ մեզ հետաքրքրող տվյալները պահպանվել են այնպիսի հավաստի ու հեղինակավոր տեքստերում, որոնց սկզբնաղբյուրները միջագետքյան են:

Մեզ անհրաժեշտ աշխարհագրական ցուցումը նախ գտնում ենք «Հոբեյանների գիրք» կոչվող հին մատյանում:<sup>2</sup> Ծննդոց գրքի այս պարականոն մատյանը նաև կոչվում է «Փոքր Ծննդոց», որում Սինայ լեռան վրա Մովսեսին հայտնված հրեշտակը Աստծո հրամանով նրան պատմում է արարչությունից մինչև այդ պահը տեղի ունեցած դեպքերը: Հոբեյանների գրքում հատուկ ուշադրություն է դարձվում դեպքերի առավել մանրամասն ժամանակագրությանը և

<sup>1</sup> . Հ. Մարտիրոսյան, Հայկական ժայռապատկերների և հին աշխարհի գրային համակարգերի ծագումնաբանական առնչությունները, Բազմավեպ, 2008, էջ 198-247

Հ. Մարտիրոսյան, Հայկական նշանագրերի ուղին պալեոլիթից մինչև միջնադար, Բազմավեպ, 2010

<sup>2</sup> . Книга Юбилеев: Введ. и рус. пер. проф. прот. А. Смирнова: 2-й вып. апокрифов Ветхого Завета. Казань, 1895. Սկսած այն պահից, երբ Հոռմի կաթոլիկ եկեղեցին «Հոբեյանների գիրքը» հայտարարեց պարականոն, արևմուտքում այդ գրքի հիշատակումները դադարեցին: Սակայն հունական եկեղեցին ժամանակ առ ժամանակ անդրադառնում էր այդ գրքին: «Հոբեյանների գիրքը» հիշատակում են նաև VIII-XII դդ բյուզանդական հեղինակները (Գևորգ Սինկելլոս, Գևորգ Կեդրին, Միքայել Գլիկա, Հովհաննես Զոնար): «Հոբեյանների գրքի» ժամանակակից տարբերակը միսսիոներ Կրապֆը XIX դ 40-ական թվերին հայտնաբերել է Եթովպիայում՝ եթովպերեն լեզվով: Հետազոտողները գտնում են, որ գրքի նախնական լեզուն եղել է եբրայերենը և այն գրվել է Ք.ա. 160-70թթ միջակայքում:

այս առումով այն էապես տարբերվում է Ծննդոց գրքի ժամանակագրությունից: Եթե Ծննդոց գիրքը բերում է միայն երկու հաջորդական դեպքերի միջև եղած ժամանակահատվածը, ապա Հոբեյանների գիրքը բերում է բոլոր նշանակալից դեպքերի ժամանակը՝ հաշված արարչության պահից:

Հոբեյանների գրքում մեզ հետաքրքրող հատվածը բերվում է ջրհեղեղին անմիջապես հաջորդող դեպքերի նկարագրության մեջ: Այս աղբյուրը ևս Նոյի տապանի կանգառի լեռ է նշում Արարատ երկրի լեռներից մեկը: Սակայն ի տարբերություն Ծննդոց գրքի, Հոբեյանների գիրքը տապանակիր լեռան անունը նշում է Լուբար ձևով. «Նոյը խաղողի որթեր տնկեց Արարատի լեռներից մեկի՝ Լուբար կոչվող լեռան (լանջին), որի վրա կանգ առավ տապանը»:<sup>3</sup> Տապանի լեռը Լուբար (Lwbr twr) է անվանվում նաև մի այլ աղբյուրում՝ Ծննդոց գրքի ապոկրիֆում (I Q Genesis Apocryphon), որը 1947թ հայտնաբերվել է Կումրանի քարանձավում: Այս աղբյուրի X գլխի 12-րդ տողում ասվում է, թե «... տապանն իջավ Արարատյան լեռներից մեկի վրա», իսկ XII գլխի 13-րդ տողում Նոյի անունից ասվում է. «Ես իմ որդիների հետ սկսեցի հող մշակել և ես խաղողի այգի տնկեցի ... Լուբար լեռան վրա և չորս տարի անց այն ինձ գինի տվեց»: Նաև վկայվում է, որ Նոյը թաղվում է Լուբար լեռան վրա. «Եւ հանգավ Նոյը իր հայրերի հետ ու թաղվեց Լուբար լեռան վրա, Արարատ երկրում»:<sup>4</sup> Այս վկայությունները նաև փաստում են, որ տապանակիր Լուբար լեռը գտնվում է Արարատ երկրում՝ Հայաստանում:

Ըստ Հոբեյանների գրքի, Նոյի երեք որդիներն իրենց բնակության համար քաղաքներ են կառուցում Լուբար լեռան շրջակայքում. Սիմը լեռան արևելյան լանջին, Հաբեթը՝ արևմտյան և Քամը՝ հարավային:<sup>5</sup> Սեմի, Հաբեթի ու Քամի սերունդները բազմանում են և իրենց համար բնակության նոր վայրեր հիմնում: Հոբեյանների գիրքը մանրամասնում է, թե ինչպես է Սեմի թոռը՝ Արփաքսաթի որդի Կայինամը (Կայինան) իր քաղաքը կառուցելու համար տեղ փնտրում: Իր որոնումների ընթացքում . «Նա գտնում է արձանագրություն, որը նախահայրերը գծագրել էին ժայռի վրա: Եւ նա կարդաց թե ինչ է գրված, թարգմանեց այն և գտավ, որ այնտեղ Պահապանների ուսուցանած գիտությունն է Արեգակի, Լուսնի և աստղերի կառքերի և երկնային նշանների մասին»:<sup>6</sup>

<sup>3</sup> . Հոբեյանների գիրք, VII

<sup>4</sup> . Հոբեյանների գիրք, X

<sup>5</sup> . Թվում էր, թե եղբայրներից որևէ մեկի բնակության վայր պիտի նշվեր բարեբեր Արարատյան դաշտը՝ Լուբար լեռան հյուսիսային մասը: Սակայն կարծում ենք, որ սա ուղղակի ցուցում է այն մասին, որ Արարատյան դաշտն այդ ժամանակներում դեռևս ջրածածկ էր: Ըստ երկրաբանական տվյալների, Արարատյան ծովը սկսել է նվազել Ք.ա. X-VIII հազարամյակներում:

<sup>6</sup> . Հոբեյանների գիրք, VIII; Սեմի թոռ և Եբեթի պապ Կայինանի անունը բացակայում է Ծննդոց գրքի եբրայերեն տեքստում: Ծննդոց գրքի հայերեն թարգմանության որոշ ձեռագրեր հիշատակում են Կայինանին, որոշները՝ ոչ: Կայինան անունը բերում են Հովսեփոս Փլավիոսը, Մովսես Խորենացին, Ծննդոց գրքի հուներեն ձեռագրերը և բերվում է Ղուկասի ավետարանում (գ, 36)՝ Հիսուս Քրիստոսի տոհմաբանության մեջ:

Հոբելյանների գրքի այս փոքր հատվածում բերված նկարագրությունից մենք հասկանում ենք, որ Կայինանի հայտնաբերած ժայռագրերը Մասիսից արևելք ընկած Սյունիքի ժայռապատկերներն են, որոնցում առակա են Արեգակի, Լուսնի, աստղերի, կառքերի պատկերները: Այն փաստը, որ Կայինանը ընթերցում և թարգմանում ու հասկանում է իմաստը, նշանակում է դրանք իմաստակիր գրեր են: Իսկ քանի որ, ըստ Կայինանի հասկացածի, այդ տեքստը վերաբերում էր երկնային լուսատուների շարժումներին ու երկնային նշաններին, ապա տեքստը պիտի ունենար դիցաբանական ձևակերպումներ:<sup>7</sup>

Հավատա՞լ, թե՞ չհավատալ այս հին գրավոր աղբյուրի վկայությանը: Մենք չհավատալու հիմքեր չունենք, քանի որ մեր վերլուծությունը ևս հանգեցնում է այն մտքին, որ հայկական ժայռապատկերները դիցաբանական փոքր սյուժեների վրա կառուցած պատկերագրային տեքստեր են:<sup>8</sup> Հոբելյանների գրքի «ընթերցում և թարգմանում է» արտահայտությունը վկայությունն է այն իրողության, որ Կայինանը պատկերագիրը ընթերցում ու դարձնում է խոսք՝ թարգմանում է:

Կայինանն իր ապագա քաղաքատեղի որոնումներն անշուշտ պիտի սկսեր պապի՝ Մեմի կառուցած քաղաքից, որը Լուրար=Մասիս լեռան արևելյան լանջին էր:<sup>9</sup> Լեռան

<sup>7</sup> . Այս թեմային Հոբելյանների գրքից կամ այլ աղբյուրից հավանաբար ծանոթ էր նաև Վարդան Արևելցին (1198-1271թթ): Նա գրում է. «... Արփաքսաղը իր հարյուր երեսուներեցերորդ տարում ծնեց Կայինանին. սա զարգացրեց քաղաքությունը, գտավ աստղերով գուշակելու միջոցը, որի համար իր որդիները նրան աստված համարեցին և նրա կենդանության ժամանակ նրա արձանը պատրաստեցին ու պաշտեցին այն» (Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, Երևան, 2001, էջ 40):

<sup>8</sup> . Հ. Մարտիրոսյան, Հայկական ժայռապատկերների և հին աշխարհի գրային համակարգերի ծագումնաբանական առնչությունները, Բազմավեպ, 2008, էջ 198-247

<sup>9</sup> . Լուրարն անկասկած Մասիս լեռան անվանումներից մեկն է, որի իմաստն ու ծագումը կարոտ է պարզաբանման (տես՝ Ա. Մուշեղյան, Ո՞ր լեռան վրա է իջել Նոյան տապանը, ՊԲՀ, №1, 2003, էջ 3): Լեռան Լուրար անվանումը եբրայական միջավայրից, տվյալ դեպքում Հոբելյանների գրքից, է անցել քրիստոնեական գրականություն: Եբրայերենի համար էլ սկզբնաղբյուր են ծառայել միջագետքյան սեպագիր տեքստերը: Հետևաբար Լուրար անվան ծագումն ու իմաստը պարզելու համար անհրաժեշտ է դիմել սեպագրական տվյալներին:

Քանի որ Լուրար լեռը ներկայացվում է որպես ջրհեղեղից փրկվելու վայր, ապա բնական է ենթադրել, որ անվան իմաստը պիտի կապ ունենա «ջրհեղեղ» կամ «փրկություն» հասկացություններից մեկն ու մեկի հետ: Շումերերում «ջրհեղեղ» բառն արտահայտվում է URU<sub>2</sub>=URUxUD և URU<sub>18</sub>=URUxA գաղափարագրերի միջոցով: Սակայն, քանի որ URU սեպն ունի LU<sub>8</sub> ընթերցում, UD սեպը՝ PAR, BAR<sub>6</sub> ընթերցումներ, իսկ A սեպը՝ BAR<sub>x</sub> ընթերցում, ապա «ջրհեղեղ» իմաստի համար հնարավոր է նաև վերականգնել URU<sub>2</sub>=LU<sub>8</sub>x BAR<sub>6</sub>=Lubar և URU<sub>18</sub>=LU<sub>8</sub>xBAR<sub>x</sub>=Lubar ընթերցումներ: Հետևաբար սեպագրական տեքստի թարգմանը «Լուրար լեռ» անվանման մեջ դրել է «Ջրհեղեղի լեռ» բառացի նշանակությունը:

Շումերական գաղափարագրի Lubar ընթերցումն ամենայն հավանականությամբ պատկանում է այն սխալ ընթերցումների ու մեկնաբանությունների թվին, որոնցով առատ են հետսեպագրական շրջանի եբրայերեն ու հուներեն տեքստերը: Նշենք նման թյուր ընթերցումների ու մեկնաբանությունների մի քանի օրինակ.

ա. շումերագետ Ս. Կրամերը նկատելով, որ շումերեն *ti* բառն ունի «կող» և «կյանք» իմաստները, իրավացիորեն նոր մեկնաբանություն տվեց Օննդոց գրքում Ադամի կողից Եվայի ստեղծման դրվագին: Իրականում Աստված Եվային ոչ թե Ադամի կողից ստեղծեց, այլ Ադամի կյանքից վերցրեց ու ստեղծեց Եվային (հմմտ. շումերեն *ti* «կյանք» և հայերեն տի «տարիք, հասակ, կյանքի տևողություն»):

հարավակողմը զբաղեցրել էին Քամի սերունդները, իսկ արևմտյան կողմը՝ Հաբեթի: Լեռան հյուսիսակողմը չի հիշատակվում, քանի որ այն հավանաբար դեռևս ծածկված էր Արարատյան ծովից մնացած լճերով ու ճահիճներով: Հետևաբար Կայինանը պիտի տարածվեր դեպի արևելք, որտեղ Լուրար=Մասիս լեռան դիմաց հյուսիսից հարավ ձգվում են ժայռագրերի լեռները՝ Գեղամա, Վարդենիսի և Զանգեզուրի լեռնաշղթաները: Եւ փաստորեն Կայինանը տեսել ու ընթերցել է այն ժայռագրերը, որոնք այժմ դարձել են մեր քննության նյութը:



Սկար 1. Նմուշ Սյունիքի ժայռապատկերներից (լուսանկարը Ս. Շահինյանի):

Հորելյանների գրքի այս վկայությունը հավատ է ներշնչում նաև այն պատճառով, որ դրանք հաստատվում են Հին Կտակարանի Ծննդոց գրքի տվյալներով: Հետազոտողները,

---

բ. Ծննդոց գրքում Եդեմից բխող ու չորս գլուխների բաժանվող մայր գետը եբրայերեն բնագրում անվանվում է Nagar: Այս անվանումն էլ է գալիս շումերենից, սակայն շումերենում այս սեպն ունի նաև Haia, Haya ընթերցում: Հայտնի է, որ <sup>d</sup>EN.KI = <sup>d</sup>Haia = Հայ Աստվածը քաղցրահամ ջրերի տիրակալն է և հետևաբար գետի անվան համար շումերական սեպի NAGAR ընթերցման փոխարեն պետք էր վերցնել Haia ընթերցումը:

գ. Ըստ Նիկողայոս Դամասկեցու հաղորդած տեղեկության, որը պահպանվել է Հովսեպոս Փլավիոսի «Հրեական հնախոսություն» աշխատության մեջ, ջրհեղեղից փրկող լեռն անվանվել է Բարիս:

Շումերական շրջանում BAR (𒀭) և MAS, MAS (𒀭) սեպերը տարբերակվում էին, սակայն ասուրաբաբելական շրջանում նրանք նույնանում են և արտահայտվում խաչվող երկու սեպերով (𒀭), որը կարող ենք ընթերցել ինչպես BAR, այնպես էլ MAS, MAS: Հետևաբար ջրհեղեղի լեռան անունը հնարավոր է ընթերցել և Բարիս, և Մասիս, որը և ճիշտն է (այս օրինակն ըստ Ա. Մովսիսյան, Սրբազան լեռնաշխարհը, Երևան, 2004):

Նման օրինակները շատ են, որոնք, մանավանդ տեղանունների դեպքում, դժվարացնում են այդ տեքստերի հիման վրա պատմական դեպքերի քննությունը:

ելնելով Հոբեյանների գրքի և կուրմանյան պարականոն Ծննդոցի միջև եղած ընդհանրություններից, գտնում են, որ սրանց հեղինակներն օգտվել են մի ընդհանուր աղբյուրից, որը տարբեր է Հին Կտակարանի սկզբնաղբյուրից: Այս պարագայում Հին Կտակարանի վկայությունը անկախ է Հոբեյանների գրքից և հետևաբար նույնքան, կամ թերևս առավել արժեքավոր: Հին Կտակարանի վկայությունն անկախաբար արժեքավոր է նաև այն առումով, որ վերաբերում է նույն ժամանակաշրջանին ու նույն դեպքերին: Այժմ, այս պարզաբանումներից հետո, անդրադառնանք Հին Կտակարանի բուն վկայությանը:

Հին Կտակարանի Ծննդոց գրքում ասվում է. «Եւ նստաւ տապանն ... ի լերինս Արարատայ»<sup>10</sup>, սակայն, ի տարբերություն Հոբեյանների գրքի, որոշակի լեռան անուն չի նշում: Հոբեյանների գիրքը նաև բավականին մանրամասն նկարագրում է թե ինչպես է Նոյը վիճակահանությամբ աշխարհը բաժանում իր երեք որդիների միջև: Այս առումով ևս Ծննդոց գրքի տվյալներն աղքատիկ են: Եթե որոշ տվյալներ են հաղորդվում Քամի սերունդների զբաղեցրած տարածքների մասին, ապա Մեմի ժառանգներից նշվում է միայն Եբերի երկու որդիներից Եկտանի և նրա 13 որդիների զբաղեցրած տարածքը: Թվարկելով Եկտանի որդիների անունները, Ծննդոց գիրքն այնուհետև ասում է.

Հայերեն տարբերակը - **«Եւ եղև բնակութիւն նոցա ի Մասեաց մինչև ի գալ ի Սովփերա լեառնն Արևելեայ»:**<sup>11</sup>

Եբրայերեն տարբերակը - **vyhy mvsbm mmsa bakh sprh hr hqdm**

Հուներեն տարբերակը - **και ἐγένετο ἡ κατοίκησις αὐτῶν ἀπὸ Μασση ἕως ἑλθεῖν εἰς Σωφηρα, ὄροζ ἀνατολῶν.**

Լատիներեն տարբերակը - **et facta est habitatio eorum de Messa pergentibus usque Sephar montem orientalem.**

Ռուսերեն տարբերակը - **их земли простираются от Мешы на восток, до Сефарских гор.**

Ծննդոց գրքի այս կարճ հատվածից մեր քննության նյութը «Մասեաց» և «Սովփերա» տեղանուններն են, որոնք այլուր չեն հիշատակվում: Հետազոտողները դժվարանում են նույնացնել այս տեղանունները և դրանց ստույգ տեղադրությունը առ այսօր մնում էր անհայտ:<sup>12</sup>

<sup>10</sup> . Ծննդոց Ը, 4

<sup>11</sup> . Ծննդոց Ժ, 30: Տես՝ Գիրք Ծննդոց, քննական բնագիր, աշխատասիրությամբ Ա. Ջեյթունյանի, Երևան, 1985:

<sup>12</sup> . Տես՝ Encyclopedia Biblica, ed. T.K. Cheyne, London, 1903; В. Вихлянцева, Библейский словарь, Москва, 1994; Կա նաև տեսակետ, թե Եկտանի որդիների բնակության վայրը սահմանագծող այս տեղանունները գտնվում են Արաբական թերակղզու հարավ-արևմտյան մասում: Օրինակ Ջ. Գիլլը (J. Gill, 1697-1771թթ) կարծում էր թե «Մեշան, Պտղոմեոսի և Պլինիոսի Մուզան է, որը Կարմիր ծովի նավահանգիստ էր, ուր հաճախ էին առևտրականներ այցելում Եգիպտոսից ու Եթովպիայից»: Մոտավորապես նույն կարծիքն է հայտնում Ու. Սմիթը (W. Smith, A Dictionary of the Bible, 1868-

Նախ անդրադառնանք Մասեաց, msa, Μασση, Messa, Mewa տեղանվանը: Աստվածաշնչյան այս տեղանունը մեկնաբանները ծագեցնում են եբրայերեն meša = «ազատություն, փրկություն» բառից:<sup>13</sup> Քանի որ տեղանունը Հին Կտակարանում գործածվում է միայն այս հատվածում՝ ետջրհեղեղյան դեպքերի առնչությամբ, և կազմված է «փրկություն» իմաստը կրող արմատով, ապա մենք բոլոր հիմքերն ունենք ենթադրելու, որ այն, որպես տեղանուն, ներկայացնում է փրկության լեռան անունը. այն լեռան, որի վրա հանգրվանեց տապանը: Այս տեղանվան հանրահայտության վկայությունն է նաև այն փաստը, որ տեղանունը հիշատակվում է առանց աշխարհագրական ցուցիչի (լեռ, երկիր, դաշտ և այլն): Անշուշտ հենվելով իրենց ձեռքի տակ եղած հավելյալ այլ փաստերի վրա, կարծում ենք նույն մոտեցումն են ցուցաբերել և Մեսրոպ Մաշտոցը և և Սահակ Պարթևը, երբ Ծննդոց գրքի թարգմանության ժամանակ հուներեն Μασση տեղանվան դիմաց դրել են «Մասեաց»: Հայերենի քերականության և հայոց ավանդության համաձայն «ի Մասեաց» նշանակում է «Մասիսներից», իմա՝ (Մեծ և Փոքր) Մասիսներ տեղանվան հոգնակի բացառական հոլովն է: Ընդ որում, որոշ ձեռագրերում, ինչպես նաև հետագա աշխարհաբար թարգմանություններում, գրված է «Մասեայ» (Մասեից) ձևը<sup>14</sup>, որով ավելի ուշ շրջանի հեղինակները տեղանվան գրելաձևը համաձայնեցրել են մեկնաբանական տեսակետի հետ: Հայերեն Մասիս տեղանվան և եբրայերեն meša =«փրկություն» բառի միջև հավանաբար կա խորքային կապ, որի բացահայտումը այս պահին դուրս է մեր խնդրի շրջանակներից: Թերևս հարկ է միայն նշել, որ Հին Կտակարանի օտարազգի մեկնաբաններին անհայտ էր տապանակիր լեռան Մասիս անվանումը, քանի որ դեռ վաղ քրիստոնեական ժամանակներից տարածված և ընդունված էր Արարատ անվանումը, որն իրականում տապանակիր լեռան երկրի անվանումն է:

Այսպիսով պարզեցինք, որ Եկտանի և նրա 13 որդիների բնակության տարածքի արևմտյան սահմանը փրկության լեռն էր՝ Մասիսը: Մնում է պարզենք արևելյան սահմանը՝ ի դեմս Սոփեր լեռան, որը Ծննդոց գրքի հայերեն ձեռագրերում հիշատակվում է նաև Սովփեր, Սովար, Սովոր ձևերով: Հայոց մատենագրությունն ու ավանդույթներն այսպիսի տեղանուն չեն հիշատակում:

---

1870yy), է. Նյուստրեմը (Э. Нюстром, Библейский энциклопедический словарь, 1868г), Ա. Լոպուխինը (А. Лопухин, Толковая Библия, 1904-1913гг): Սակայն այս տեսակետը անհիմն է, քանի որ նախ Արարական թերակղզին ոչ թե Մեմի, այլ Քամի ժառանգների տարածքն է (տես՝ Հոբելյանների գիրք, VIII-IX) և երկրորդ՝ այս տեսակետը հիմնվում է միայն տեղանունների պատահական նմանության վրա և այլ հիմնավորումներ չունի:

<sup>13</sup> . Ф.Ринекер, Г.Майер, Библейская Энциклопедия Брокгауза, 1994

<sup>14</sup> . Տես օրինակ՝ Աստվածաշունչ, Արեւելահայերէն նոր թարգմանութիւն, Մայր աթոռ և. Էջմիածին, 1994

Ինչպես արդեն նշել ենք, Մասիսներից արևելք շղթա կազմած ձգվում են Գեղամա, Վարդենիսի և Զանգեզուրի լեռները: Այս լեռնաշղթաներն են հենց ժայռապատկերների հիմնական կուտակման կենտրոնները, իմա՝ ժայռագրերի լեռները: Ըստ Հոբեյլանների գրքի, Մասիսից (=Լուրար) արևելք գնալով այս լեռներում է Եկտանի հորապապ Կայինանը հայտնաբերում ժայռագրերը: Հետևաբար Եկտանի ժամանակ ժայռագրերի լեռան տեղն անշուշտ հայտնի էր: Եւ այստեղ մեր խնդիրը հանգուցալուծվում է, երբ համեմատության մեջ ենք դնում «ժայռագրերի լեռ» և «Սոփեր լեռ» անվանումները:


«ժայռագրերի լեռ» և «Սոփեր լեռ» անվանումները բացարձակ նույնական են այն պարզ պատճառով, որ սեմական ծագումով «սոփեր» բառը ունի «գիր, գրություն» իմաստ (ասորերեն *sefrā* = «գրություն, գիրք», *sāfrā*=«գրող», եբրայերեն *spr*, *sfr* =«պատմել, հաշվել, գրել», *sōfēr* =«գրող», արամերեն *sāfrā* =«գրող», արաբերեն *sifr* =«գիրք» և այլն): Հայ մատենագրության մեջ սրանցից փոխառված «սոփեր» բառը, որը բաձարձակ նույնական է Սոփեր լեռնանվան հետ, գործածվել է «գիր, տառ, վանկ, գիրք, մատեան, գրվածք» իմաստներով:<sup>15</sup> Այս բառով է կազմված Վենետիկում Մխիթարյան միաբանների հրատարակած «Սոփերք Հայկականք» ժողովածուն, որում հավաքել են միջնադարյան մանր, կարճ գրվածքները: Նման մի Սոփերք Հայկականք են Սյունիքի լեռներում սփռված ժայռագրերը, որոնք ի տարբերություն Մխիթարյան միաբանների ժողովածուի, ստեղծվել են ավելի քան 12÷13 հազար տարի առաջ:

Այսպիսով, Հոբեյլանների գրքի և Ծննդոց գրքի տվյալները վկայում են, որ առնվազն Պաղեստինում և Միջագետքում (հայտնի է, որ Ծննդոց գրքի սկզբնաղբյուրները միջագետքյան են) գիտեին Հայաստանի ժայռագրերի գոյության մասին ու նաև գիտեին, որ դրանք գրի են առնվել նախաքրիստոսյան նահապետների կողմից:

Այս վերջին վկայությունը ժայռագրերի մոտավոր թվագրման մի նոր հնարավորություն է ընձեռնում: Այդ հնարավորությունից օգտվելու համար պիտի դիմենք երկրաբանների օգնությանը: Երկրի տարբեր կետերում և ժամանակի տարբեր պահերի համար նրանք կատարել են օվկիանոսի մակարդակի չափումներ, որոնք ամփոփված են նկար 1-ում բերված գրաֆիկում:<sup>16</sup>

<sup>15</sup> . Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, տես՝ «սոփեր» բառահոդվածը:

<sup>16</sup> . N. L. Bindoff, J. Willebrand et al, *Oceanic Climate Change and Sea Level*, Cambridge, UK, Cambridge University Press, 2007; F. Kevin, P. Johnston, D. Zwartz et al, *Refining the eustatic sea-level curve since the Last Glacial Maximum using far- and intermediate-field sites*, *Earth and Planetary Science Letters*, 1998, 163 (1-4), p. 327



Վերջին՝ Վյուրմյան սառցապատմանը հաջորդած տաք կլիմայի պայմաններում սկսվում է սառցադաշտերի ինտենսիվ հալոցքը և ~14 հազար տարի առաջ հալոցքի ջրերի առաջին զգալի ալիքը հասնում է համաշխարհային օվկիանոս: Դրան հաջորդած հազար տարիների ընթացքում օվկիանոսի մակարդակը բարձրանում է ավելի քան 30մ: Կլիմայի հետագա տաքացման արդյունքում սկսվում են հալվել նաև Երկրի բարձր լայնություններում գտնվող սառցադաշտերը և հալոցքի ջրերի նորանոր ալիքները շարունակում են ջրածածկ անել ծովափնյա տարածքները: Այդ աղետալի պրոցեսը ավարտվում է ~8000 տարի առաջ, որի հետևանքով օվկիանոսի մակարդակը ընդհանուր առմամբ բարձրանում է ~120մ: Ջրհեղեղի ալիքների աղետալի հետևանքները առավել շատ զգում են Չինաստանի արևելքի, Հարավ-արևելյան Ասիայի, Հնդկական թերակղզու հարավի, Միջագետքի, Միջերկրական ծովի ափամերձ շրջանի բնակիչները, որտեղ էլ պահպանվել են ջրհեղեղի մասին առավել ցայտուն հիշողությունները:

Երկրաբանական տվյալները համադրելով Հոբեյանների գրքի և Ծննդոց գրքի տվյալների հետ, ստանում ենք մի հավելյալ հիմնավորում, որ Սյունիքի ժայռագրերը փորագրվել են Ք.ա. XI հազարամյակից ոչ ուշ՝ ջրհեղեղից առաջ և նախաջրհեղեղյան նահապետների կողմից:

Աշխատանքը կատարվել է Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամի (ANSEF, New York, USA) HU-History-2061 դրամաշնորհի աջակցությամբ:



Համլետ Մարտիրոսյան

e-mail

[hmart@yerphi.am](mailto:hmart@yerphi.am)

հեռ. 35-00-28

091-07-12-03